ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 9 15. 11. 2011թ.

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ:

Հաշվի առնելով , որ Նոր Կյուրին համայնքի մանկապարտեզը չի ջեռուցվում՝

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ջեռուցման բացակայության և ֆինանսավորման բացակայության պատճառով դադարեցնել մանկապարտեզի աշխատանքները 6 ամիս ժամկետով:

Ավագանու անդամներ

Ավագյան Ս.
Կարախանյան Ա.
Տոնապետյան Ա.
Օհանյան Վ.

ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Գ. ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 10 15. 11. 2011թ.

2012 Թ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հոդվածներով և « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Նոր Կյուրին համայնքի վարչական տարածքում 2012 թ համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1.000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների. վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա , բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների. վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա , սույն որոշման իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ

ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ

բ/ հեղուկ վառելիքի, տեղնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառ.մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ
բ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000 դրամ

9. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000 դրամ

10. Սույն որոշման 1-ին , 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքներում հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

11. ՏԻՄ տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2.500 դրամ

12. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 3.000 դրամ

Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Ավագանու անդամներ

. Ավագյան Ս.
Կարախանյան Ա
. Տոնապետյան Ա.
Օհանյան Վ.

Նոր Կյուրին համայնքի ղեկավար՝ Գ. Օհանյան